ՊԱՇՏՈՆ	Քարտային պրոդուկտ մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	03/07/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	26/07/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու Քարտային պրոդուկտ մենեջերի ստորև գործառույթների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրեն կցված պրոդուկտների հետստուգման իրականցում, պրոդուկտի կենսացիկլի կառավարում, արդյունքների վերաբերյալ պարբերական տեղեկատվության տրամադրում անմիջական ղեկավարին,
- Իրեն կցված պրոդուկտի մշակման և ներդրման ընթացքում շահագրգիռ ստորաբաժանումների հետ քննարկումների կազմակերպում,
- Բանկի ֆիզիկական անձ հաճախորդներին վաճառվող պրոդուկտների/բանկային ծառայությունների ծավալների ավելացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,
- Իրեն կցված պրոդուկտների վերաբերյալ թրեյնինգների նյութերի պատրաստում և վարում,
- Իրեն կցված պրոդուկտների մշակման, ներդրման ուղղված միջոցառումների կառավարում,
- Բիզնես առաջարկների և դրանց հետ առնչվող փաստաթղթերի պատրաստում,
- Լոկալ և միջազգային գործընկերների հետ նոր նախագծերի իրականացման մասով բանակցությունների վարման մասնակցություն (այդ թվում՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի),
- Այլ պարտականություններ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ,
- Բանկում սահմանված ներքին, կարգապահական աշխատանքային ռեժիմի և գործարար էթիկայի կանոնների պահպանում, աշխատողների արտաքին տեսքի և գործարար ոճի վերաբերյալ միասնական ստանդարտների պահպանում, ղեկավարության կողմից իրեն տրված հանձնարարականների ճիշտ և ժամանակին կատարում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության կրում,
- Իրեն վստահված Բանկի գույքի նպատակային և միայն ծառայողական նպատակներով շահագործում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- PMP որակավորման վկայականի առկայություն /ցանկալի է/
- Նախագծերի կառավարման մեթոդների, միջազգային կանոնների իմացություն, Բանկային գործ,
- Ֆինանսներ,

- Մարքեթինգ,
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն
- Համապատասխան ներքին կանոնակարգեր
- Մինչև 2 տարվա աշխատանքային փորձ
- Համակարգչային գիտելիքներ – MS Office ծրագրային փաթեթի լավ իմացություն, հատկապես Excel, PowerPoint, MS Project և Visio
- Լեզուների իմացություն - Հայերեն (գերազանց), անգլերեն (լավ), ռուսերեն (լավ) լեզուների իմացություն
- Հաղորդակցման և ներկայացման հմտություններ,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում
- Թվային մտածելակերպ,
- Վերլուծական հմտություն,
- Համագործակցելու ունակություն

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/149 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով: «ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: